

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Ք

- Պետական քննական հանձնաժողովը կազմվում է միասնական ձևով ըստ մասնագիտությունների:

Մեծաքանակ շրջանավարտների դեպքում նույն մասնագիտության գծով կարելի է կազմակերպել երկու և ավելի հանձնաժողովներ, իսկ փոքրաքանակի դեպքում՝ հարակից մասնագիտությունների գծով կազմակերպել միացյալ մեկ հանձնաժողովով:

- Քննական հանձնաժողովի գործունեության ոլորտի մեջ են մտնում շրջանավարտի տեսական գիտելիքների մակարդակի, նրա պրակտիկ աշխատանքի նախապատրաստվածության աստիճանի ստուգումը, համապատասխան որակավորման շնորհումը, մասնագետների պատրաստման որակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և այլն:

- Մինչև ութ հոգով կազմված պետական քննական հանձնաժողովի կազմը բաղկացած է հանձնաժողովի նախագահից և անդամներից, որը կազմակերպվում է ամեն տարի և գործում է ամբողջ տարվա ընթացքում:

- Պետական քննական հանձնաժողովի նախագահին նշանակում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, համալսարանի ռեկտորի առաջարկությամբ տվյալ մասնագիտությամբ արտադրության առավել խոշոր մասնագետի կամ գիտնականների թվից, որոնք համալսարանի հիմնական աշխատողներ չեն:

- Քննական հանձնաժողովի մեջ որպես անդամներ կարող են ընդգրկվել համալսարանի ռեկտորը կամ պրոռեկտորը, տվյալ ֆակուլտետի ղեկանը կամ տեղակալը, թողարկող ամբիոնի վարիչը (ները), առանձին առարկաների դասախոսներ, արտադրության և այլ մարմիններում աշխատող մասնագետներ, պրոֆեսորներ ու դասախոսներ այլ բուհերից, ինչպես նաև գիտահետազոտական հիմնարկներից աշխատողներ:

- Որպես քննող դասախոս հանձնաժողովի մեջ կարելի է ընդգրկել համապատասխան ամբիոնի դասախոս պայմանով, եթե հանձնաժողովի կազմում չկա տվյալ ամբիոնի համապատասխան ներկայացուցիչ: Այս դեպքում հանձնաժողովի մեջ ընդգրկված քննող դասախոսը օգտվում է հանձնաժողովի անդամի իրավունքներից:

- Հանձնաժողովի անդամներ նշանակվում է ռեկտորի հրամանով հանձնաժողովի աշխատանքների սկսելուց առնվազն 10 օր առաջ:

- Պետական քննական հանձնաժողովը աշխատում է ուսումնական պլանով նախատեսված ժամկետավորված գրաֆիկով, իսկ հեռակա ուսուցման գծով՝ ելնելով հնարավորություններից, անհրաժեշտության դեպքում կարելի է կազմակերպել այլ ժամկետում:

- Պետական քննական հանձնաժողովի աշխատանքային գրաֆիկը սահմանվում է ուսումնական պլանի համաձայն:

- Պետական քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագիծ) պաշտպանության թույլատրվում են այն ուսանողները, որոնք ամբողջությամբ կատարել են ուսումնական պլանով նախատեսված ծրագրերը: Քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանության թույլատրված ուսանողների ցուցակը հանձնաժողովին է ներկայացնում ֆակուլտետի ղեկանը:

- Պետական քննական կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանության աշխատանքային օրերը պետք է համաձայնեցնել հանձնաժողովի նախագահի հետ, որը ղեկանի ներկայացմամբ հաստատվում է ուսումնական գծով պրոռեկտորի կողմից, մեկ ամիս առաջ: Հանձնաժողովի աշխատանքի օրվա տևողությունը չպետք է գերազանցի 6 ժամից:

Պետական քննական հանձնաժողովին պետք է ներկայացվի.

ա) Ուսումնական պլանով նախատեսված ծրագրի կատարման, տեսական առարկաներից, կուրսային աշխատանքներից (նախագծերից) ուսումնական և արտադրական պրակտիկաներից ուսանողի ստացած գնահատականները, որը հանձնաժողովի նիստում պետք է ընթերցվի.

Եթե առարկան ունեցել է մի քանի քննություն ապա հաշվում են վերջինը, իսկ եթե այն չի արտահայտում ուսանողի գիտելիքների մակարդակը, ապա ամբիոնին թույլատրվել է որոշելու, թե որ կիսամյակի գնահատականը հաշվել:

բ) Դիպլոմային աշխատանքի (նախագծի) ղեկավարի կարծիքը:

գ) Գրախոսողի կողմից տրված գրախոսականը:

Արտադրական հետքերություն ներկայացնող դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանությունը կարելի է կազմակերպել նաև տնտեսություններում, հիմնարկներում, ձեռնարկություններում:

- Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը կամ պետական քննությունների հանձնելը կատարվում է պետական քննական հանձնաժողովի բաց նիստում, հանձնաժողովի կազմի 2/3 ից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում:

- Քննությունները անց է կացվում հարցատոմսերով, որը պետք է կազմվի ուսումնական պլանով նախատեսված ծրագրին խիստ համապատասխան:

- Ամեն առարկայի պետական քննության կամ մեկ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությանը հատկացվում է 45 րոպե ժամանակ, որից մինչև 20 րոպե ն դիպլոմային աշխատանքի (նախագծի) բովանդակության ներկայացման համար:

- Պետական քննության կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) արդյունքները գնահատվում են 5 (հինգ), 4 (չորս), 3 (երեք), 2 (երկու) միջերով, հայտարարվում է նույն օրը և ձևակերպվում է պետական քննական հանձնաժողովի նիստի արձանագրությամբ:

- Դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից կամ պետական քննություն հանձնելուց հետո շրջանավարտներին պետական քննական հանձնաժողովի կողմից շնորհվում է մասնագիտական որակավորում, հանձնելով դիպլոմ և կրծքանշան:

Ուսուցման ընթացքում ուսումնական պլանով նախատեսված բոլոր քննական առարկաների 75% հինգ ստացած, իսկ մնացած առարկաներից չորս գնահատականներ ստացած դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունը կամ պետական քննությունը հինգ միջով հանձնած ուսանողին տրվում է գերազանցության դիպլոմ:

Պետական քննական հանձնաժողովը որոշումները ընդունում է փակ նիստում, բաց քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ եթե ձայները բաշխվում են հավասար, ապա նախագահի ձայնը համարվում է որոշիչ:

- Պետական քննական հանձնաժողովի բոլոր նիստերը արձանագրվում են համապատասխան ձևերում (1,2,3): Արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նիստին մասնակցած բոլոր անդամների կողմից և այն գրքի ձևով պահվում է համալսարանում:

- Եթե դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից ուսանողը ստանում է անբավարար գնահատական ապա պետական քննական հանձնաժողովը որոշում և արձանագրում է, թե ուսանողը նույն թեմայի վերամշակումից հետո կարող է երկրորդ անգամ պաշտպանել, թե պարտավոր է կատարի նոր թեմա, որը սահմանվում է համապատասխան ամբիոնի կողմից:

- Պետական քննական առարկաներից անբավարար ստացած ուսանողը կարող է շարունակել մնացած առարկաների քննությունները: Պետական քննությունից անբավարար գնահատական ստացած ուսանողին չի թույլատրվում դիպլոմային նախագծի պաշտպանությանը: Պետական քննության ժամանակ անբավարար ստացած առարկայից ուսանողը երկրորդ անգամ այն կարող է հանձնել հաջորդ տարին, կամ ռեկտորի թույլտվությամբ հանձնաժողովի աշխատաժամանակաշրջանում:

Պետական քննությունից կամ դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանությունից անբավարար գնահատական ստացած ուսանողը ազատվում է համալսարանից, և նրան տրվում է ընդունված ձևի ակադեմիական տեղեկանք:

- Այն ուսանողները, որոնք չեն հանձնել պետական քննություններ կամ չեն պաշտպանել դիպլոմային նախագիծը (աշխատանքը) հարգելի պատճառով, ռեկտորը կարող է երկարացնել նրանց ուսուցման ժամկետը մինչև պետական քննական հանձնաժողովի աշխատանքի հաջորդ քննաշրջանը, բայց մեկ տարուց ոչ ավելի:

- Սահմանված ժամկետներում դիպլոմային աշխատանք (նախագիծ) չպաշտպանած կամ պետական քննություն չհանձնած ուսանողները ազատվում են համալսարանից, թույլատրվում է երեք տարվա ընթացքում հանձնելու պետական քննություն կամ պաշտպանելու դիպլոմային աշխատանք (նախագիծ), տեսական կուրսն ավարտած տարվա ուսումնական պլանով նախատեսված ծրագրերով:

- Պետական քննական հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովի նախագահը երկու շաբաթվա ընթացքում հաշվետվություն է ներկայացնում, որտեղ նշվում է տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստվածության որակական մակարդակը, նախագծերի (աշխատանքների) կատարման որակը, նրանց թեմաների համապատասխանությունը, գյուղատնտեսական գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների ժամանակակից մակարդակին, ինչպես նաև առաջարկություններ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

- Պետական քննական հանձնաժողովի հաշվետվությունը քննարկվում և հաստատվում է ֆակուլտետի գիտխորհրդում: